ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

« 02 » դեկտեմբեր 2022թ
Ք.Եղեգնաձոր

ՀՐԱՄԱՆ N 394

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 99-1.4-Մ4-1) ՊԱՇՏՈՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1554-Ն որոշմամբ հաստատված կարգի 151-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N441-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետի (ծածկագիր՝ 99-1.4-Մ4-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 30-ի եզրակացությունը և Լուսինե Հարությունյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. 2022 թվականի դեկտեմբերի 5-ից Լուսինե Սպարտակի Հարությունյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետի (ծածկագիր՝ 99-1.4-Մ4-1) պաշտոնին, 9 ամիս փորձաշրջանով:
2. Լուսինե Հարությունյանի փորձաշրջանի համակարգող նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր տնտեսագետ (ծածկագիր՝ 99-1.1-Մ2-1) Աննա Սաֆարյանին:
3. Հաշվապահին՝ վճարումը կատարել օրենսդրությամբ սահմանված կարգով:

02.12.2022

X

ԱՐՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: KARAPETYAN ARSEN 1710660295

Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ